

ԳԻՏԵԼԻՔԸ ԵՎ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԿԱՆԽԵՆԹԱԴՐՈՒԹԱՅԻՆ ՀԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ

Հրանուշ Թովմասյան

*Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական
լեզվահասարակագիտական համալսարան*

Գիտելիքը և պատկերացումը խոսող անհատի կանխենթադրության ի հենքի կառուցվածքային միավորներ են: Կանխենթադրության ի հենքի կազմավորումը, այսինքն՝ գիտելիքի և պատկերացման կառուցվածքը, պայմանավորված է մի շարք ճանաչողական գործոններով՝ հասարակական, մշակութային, ազգային և այլն: Հաղորդակցումը իրականում խոսող անհատի կանխենթադրության ի հենքի (լեզվական) առկայացումն է:

Քանալի բառեր. գիտելիք, պատկերացում, խոսող անհատ, կանխենթադրության ի հենք, տեղեկատվություն, հաղորդակցում, անհատական/հավաքական պատկերացում:

Ներածություն

20-րդ դարավերջի մարդաբանական գիտակարգերի կտրուկ զարգացումը հանգեցրել է նրան, որ լեզվի ուսումնասիրության ցանկացած փորձ ի վերջո հանգում է անհատի հայեցողական-ճանաչողական ունակություններին և նրա հասարակական գործունեությանը: Մեր ուսումնասիրությունը ևս գերծ չի մնացել լեզվաբանական ուսումնասիրությունների գերակա ընթացքի ազդեցությունից՝ հայտնվելով այնպիսի մարդաբանական գիտակարգերի խաչմերուկում, ինչպիսիք են հոգելեզվաբանությունը, էթնոլեզվաբանությունը, լեզվամշակութաբանությունը, գործաբանությունը և ճանաչողական լեզվաբանությունը:

Հոդվածի նպատակն է վեր հանել խոսող անհատի կանխենթադրության ի հենքի կառուցվածքային միավորները և դրանց տարբերությունները:

Ի սկզբանե լեզվաբանական գրականության մեջ շրջանառվում էր *լեզվական անհատ* եզրույթը (Карацоб 1882; Johnstone 1996): Լեզվական անհատը, մեր ըմբռնմամբ, լեզվակիրն է: Ընդ որում, լեզվական անհատ և *խոսող անհատ* հասկացությունները հարաբերակցվում են հարացուցային հարաբերություններով. եթե լեզվական անհատը անփոփոխակն է, ապա խոսող անհատը՝ տարբերակը: Այսինքն՝ ասվածից կարող ենք ենթադրել, որ լեզվական անհատ-

տը հանդես է գալիս որպես լեզվախոսողության հնարավորություն, իսկ խոսող անհատը՝ իրականություն, դրա առկայացում:

Մարդու ճանաչողական, մտահայեցողական գործընթացը և դրա արդյունքը, սկիզբ են առնում նրա ծնվելու պահից և տևում մինչև մահ: Այդ գործընացների արդյունքում նրա գիտակցության մեջ արտացոլվում և ձևավորվում է տարաբնույթ գիտելիքների և պատկերացումների մի ստվար զանգված, որը մենք անվանել ենք *կանխենթադրության հենք*:

Կանխենթադրության հենքի կառուցվածքային միավորները, դրանց կառուցվածքը և տարբերությունները

Կանխենթադրության հենքը «ձևավորող կառուցվածքային տարրերն» են *գիտելիքը* և *պատկերացումը*: Կանխենթադրության հենքը կազմված է մի շարք գիտակցական կառույցներից, սակայն այդ բոլոր կառույցները «ձևավորող, նյութական հենքը» երկուսն են՝ գիտելիքը և պատկերացումը: Այս երկուսը, ունենալով շատ ընդհանրություններ, այնուամենայնիվ, տարբեր են: Պարզենք՝ ինչպես:

Նախ սկսենք նրանից, որ, մեր ընկալմամբ, գիտելիքը տեղեկատվական, բովանդակային միավոր է, որը պահանջում է ոչ թե մտավոր-ստեղծագործական աշխատանք, այլ ավելի ստույգ՝ հիշողության աշխատանք: Տվյալ խոսող անհատի բոլոր գիտելիքները կազմում են որոշակիորեն կարգավորված համակարգ: Այսինքն՝ հաղորդակցվելու և ընկալելու համար մարդն օգտվում է իր կանխենթադրության հենքի գիտելիքից՝ որպես տեղեկատվության պատրաստի աղբյուր: Այդպիսին են, օրինակ, դպրոցում, համալսարանում ստացած մեր գիտելիքը, որոշակի ստույգ աղբյուրներից ստացված տեղեկատվությունը, որը հետագայում դարձել է գիտելիք: «Գիտելիքները կայուն կառույցներ են, որոնք էապես կախված չեն իրականացվող խնդրից: Գիտելիքները պահվում են երկարաժամկետ հիշողության մեջ, և մինչև այն պահը, քանի դեռ դրանց միտումնավոր չեն փոփոխեն, ենթադրվում է, որ դրանք պիտի ունենան նույն ձևը» (Ринар 1998:5): Օրինակ՝ խանութում գնումներ կատարելիս մենք օգտվում ենք մեր մաթեմատիկական գիտելիքներից և կատարում հանրահաշվական գործողություններ: Հանրահաշվական գործողությունների արդյունքը չի փոխվում՝ կախված հաղորդակցման նպատակից, տեղից կամ ժամանակից: «Գիտելիքն այն է, ինչը արդեն մտել է գիտակցության մեջ և դարձել հիշողության մաս: Գիտելիքը պատահական փաստերի հավաքածու չէ, այլ որոշակի կարգավորված համակարգի մեջ միավորված տեղեկությունների ամբողջություն» (КСКТ 1996:28-29): Վերոբերյալ բանաձևումները հանգեցնում են գիտելիք և տեղեկատվություն եզրույթների հստակ տարանջատ-

ման անհրաժեշտության: Տեղեկատվությունը կանոնակարգված միավորների ամբողջությունն է, իսկ գիտելիքները՝ կառուցվածքայնորեն կարգավորված միավորների համակարգ: Այլ կերպ՝ տեղեկատվությունը համակարգի տարր է, գիտելիքները՝ դրանց համակարգը: Մենք դիտարկում ենք գիտելիքը՝ հիմք ընդունելով վերջին հաստատումը: **Գիտելիքը պետք է պարտադիր լինի օբյեկտիվ, պատշաճ և ճշմարիտ:**

Հատկանշական է, որ *պատկերացում* եզրույթը շատ ավելի լայն իմաստով է ընկալվում, քան գիտելիքը: Մեր ուսումնասիրություններում հանգել ենք այն համոզման, որ «պատկերացումները» որպես ընդհանրական գիտակցական երևույթ, ներառում են որոշակի պատկերացումներ, պատկերներ, հասկացություններ և դրանց հետ կապված հարանշանակային գնահատականները: Այսպիսով, «Պատկերացումը իրականության կապերի և հարաբերությունների սուբյեկտիվ արտացոլումն է, և այդ սուբյեկտիվ հարաբերությունը զգացական է» (Шахнарович, Юрьева 1990:23): Ելնելով ասվածից՝ փաստորեն, կարող ենք ենթադրել, որ **գիտելիքը օբյեկտիվ է, իսկ պատկերացումը սուբյեկտիվ, բացի այդ, գիտելիքը հավաքական է, մինչդեռ պատկերացումը կարող է լինել ինչպես անհատական, այնպես էլ հավաքական:** Այս առումով հարկ ենք համարում անդրադառնալ *հասարակական պատկերացում* եզրույթին, որը միանշանակ չի մեկնաբանվում գիտական գրականության մեջ: Նախ նշենք, որ այդ եզրույթը պատկանում է Ս. Մոսկովիչիին, որն ի սկզբանե նկատի ուներ գիտական մտքի ներկայացման հասարակական ձևերը (Moscovici 1976): Պատմականորեն այս տեսությունը բխում է Է. Դյուրկհեյմի՝ անհատական և հավաքական պատկերացումների տարանջատման գաղափարից սոցիոլոգիայում (Дюркгейм 1995): Առավելապես տարածում է գտել Դ. Ջոդելեթի՝ հասարակական պատկերացումներին տրված սահմանումը. «Հասարակական պատկերացում կարգը նշանակում է իմացության հատուկ ձև, մասնավորապես, «ողջախոհության» գիտելիքներ, որոնց բովանդակությունը, գործառույթները և վերարտադրումը հասարակայնորեն պայմանավորված է: Ավելի լայն առումով՝ հասարակական պատկերացումները առօրեական պրակտիկ մտածողության հատկանիշներն են, որոնք ուղղված են հասարակական, նյութական և իդեալական շրջապատի յուրացմանն ու իմաստավորմանը... դրանց հատուկ են բովանդակության, մտածական գործողությունների և տրամաբանության կազմակերպման հատուկ միջոցներ: Բովանդակության և դրա ներկայացման բուն գործընթացի հասարակական պատճառաբանվածությունը կանխորոշված է համատեքստով և դրանց առաջացման պայմաններով, շրջանառման ուղիներով և, ի վերջո, գործառույթներով, որոնց նրանք ծառայում են աշխարհի և մարդկանց հետ փոխհարաբերվելիս» (Jodelet 1984:361-

362): Ըստ Ս. Մոսկովիչի՝ «հասարակական պատկերացումները իրենց բնույթով ավելի հասարակական երևույթներ են, քան ճանաչողական: Դրանք կազմում են գործողությունների, գաղափարների և արժեքների բազմամակարդակ համակարգ, որը կատարում է երկակի գործառույթ. նախ սահմանել կարգ, որը թույլ կտա անհատներին կողմնորոշվել նյութական և հասարակական աշխարհում և ներագդել դրանց վրա, երկրորդ՝ հասարակության անդամներին ապահովել հաղորդակցվելու հնարավորությամբ՝ նրանց ծածկագիր տրամադրելով հասարակական շփումների, անվանումների և կյանքի տարբեր ոլորտների և անհատական ու խմբային պատմության դասակարգման համար» (Flick 1995:74):

Մեր ըմբռնմամբ՝ հասարակական պատկերացումները անցյալի իրողությունների՝ դեմքերի և դեպքերի, պատկերներն են, որոնք մեր գիտակցության մեջ ձեռք են բերում ամնիջական, նախադիպային պատկերացման ձև՝ ապահովելով բացակայող իրողության ներկայությունը: Խոսքը այն դեմքերի և իրավիճակների մասին է, որոնց հետ մենք մեզ նույնացնում ենք, օրինակ՝ մեր ծնողների, մեր ժողովրդի, պատմության, դրա դրվագների և այլն, որոնց հետ են կապվում մեր առավել վառ զգացողությունները: Այլ կերպ ասած՝ մեզ համար կարևորվում է պատկերավորությունը, գործառականությունը, զգացական երանգավորումը և գնահատողականությունը, որոնք ունեն նախադեպային բնույթ, այսինքն՝ արդեն առկա են մեր կողմից ապրված փորձում:

Գիտելիքի և պատկերացման փոխներթափանցելիությունը

Խոսելով գիտելիքների և պատկերացումների մասին՝ պետք է նշենք, որ դրանք ընդհանրական բնույթ չեն կրում, որը նշանակում է, որ ժամանակի ընթացքում դրանք կարող են փոխել իրենց կարգավիճակը՝ մեկը վերածվելով մյուսի: Օրինակ՝ հին ժամանակներում երկրագնդի կլոր լինելը գիտելիք էր առանց ապացուցողական հիմքի, սակայն գիտական մտքի զարգացման և ապացուցողական հիմքի ընդլայնման հետ մեկտեղ այդ վարկածը գիտելիքից վերածվեց պատկերացման: Եվ այժմ դրա մասին խոսում են որպես Գալիլեո Գալիլեյի կողմից առաջարկված պատկերացում: Կամ օրինակ՝ այսօր աշխարհի ստեղծման մասին հնադարյան և միջնադարյան գիտնականների տեսությունները համարվում են պատկերացումներ, սակայն նշյալ դարաշրջաններում դրանք համարվում էին միակ օբյեկտիվորեն ընդունելի աքսիոմատիկ գիտելիքներ: Այսինքն՝ **գիտելիքը օբյեկտիվ և ապացուցելի տեղեկատվություն է, մինչդեռ պատկերացումը՝ չհիմնավորված, սուբյեկտիվ, զգացական բնույթ կրող պատկեր:** Ինչ վերաբերում է, անհատական և հավաքական պատկերացումներին, ապա դրանք միշտ չէ, որ համընկնում են: Վերջինիս մասին վկայում են հասարակության մեջ ընդունված հավաքական պատկերացումները:

Օրինակ՝ հավաքական պատկերացում կարող է համարվել այս կամ այն հանրահայտ ստեղծագործողի մասին ընդունված հանրային կարծիքը՝ դրական կամ բացասական: Այդպիսին կարող է համարվել հանրահռչակ անգլիացի դրամատուրգ Ուիլիամ Շեքսպիրի մասին այն կարծիքը, որ նա եղել է փայլուն գրող: Վերջինս հավաքական պատկերացում է, քանի որ կարող են նաև լինել մարդիկ, որոնք կկարծեն, որ նա միջակ կամ նույնիսկ վատ գրող է: Վերջին տեսակետը անհատական պատկերացում է: Այսինքն՝ հավաքական պատկերացումը «պարտադրվում է» հասարակությանը և դրա մասին տվյալ հասարակական խումբը չի կարող չիմանալ, բայց և այնպես դա չի խանգարում, որ հասարակության մեկ կամ մի քանի անդամներ այդ նույն իրողության մասին ունենան սեփական կարծիք՝ պատկերացում: Օրինակ՝ քրիստոնեությունը՝ որպես կրոն, հայտնի է մարդու և բնության նկատմամբ իր մարդասիրական մոտեցումներով, սա ևս հասարակական պատկերացում է: Սակայն կարող են լինել աթեիստներ կամ հակաքրիստոնյաներ, որոնց համար քրիստոնեության պատգամները հակամարդկային են: Եվ կա մի հետաքրքրական փաստ ևս. անհատական պատկերացումը կարող է դառնալ հավաքական: Օրինակ, եթե համախմբվեն մարդիկ, ովքեր ունեն նույնատեսակ կրոնական անհատական պատկերացումներ, նրանք կարող են ձևավորել իրենց հանրությունը, թեև փոքրաքանակ, և այդ ընդհանուր անհատական պատկերացումները կդառնան հավաքական: Հավաքական և անհատական պատկերացումների փոխներթափանցելիության օրինակ կարող է լինել նաև հետևյալը. Լեոնարդո դա Վինչիի հանրահայտ Մոնա Լիզա դիմանկարի՝ կնոջ կերպարի գեղեցկությունը միանշանակ չի ընդունվում բոլորի կողմից: Կան իրարամերժ հասարակական պատկերացումներ: Ոմանց կարծիքով՝ նա շատ նրբագեղ է, սակայն կա նաև կարծիք, որ նա ունի տղամարդու դիմագծեր: Այսպիսով, միևնույն երևույթի մասին առկա է երկու իրարամերժ հասարակական պատկերացում: Ելնելով դրանից՝ ինչ-որ մեկին Մոնա Լիզա անվանելիս, կախված նրա հասարակական պատկերացումից, ասվածը կարող է որակվել՝ որպես հաճոյախոսություն կամ հեզմանք: Բացի այդ, հատկանշական է, որ այդ նույն դիմանկարի մասին բացասական կարծիքը՝ հավաքական պատկերացումը, ակնհայտորեն առաջացել է անհատական պատկերացումներից: Այսպիսով, ուսումնասիրության արդյունքների հիման վրա եզրահանգում ենք, որ հավաքական պատկերացումը «պաշտոնական»-ի կարգավիճակ ունի: Հասարակության յուրաքանչյուր անդամ, ունենալով իր անհատական պատկերացումը, գիտի, թե ինչպես է ընկալվում այս կամ այն «մշակութային առարկան» (եզրույթը պատկանում է Ն. Ուֆիմցևային (Уфимцева 1993:59-75; Уфимцева 1995: 242-249; Уфимцева 1995:55-62)):

Հատկանշական է ևս մեկ կարևոր փաստ, որը բխում է մեր ուսումնասիրության նպատակներից և խնդիրներից. պատկերացումները, բացի հավաքական և անհատական լինելուց, ունեն ևս մեկ կարևոր հատկանիշ: Դրանք կարող են լինել մշակութաին: Այսինքն՝ դրանց հիմքում ընկած իրողությունը՝ իրական կամ մտացածին դեմքը կամ առարկան, կարող է պատկանել այս կամ այն մշակույթին և բացակայել մյուսում, կամ մյուսում ունենալ հակառակ գնահատականը: Օրինակ՝ Սասունցի Դավիթը՝ որպես կերպար, որը հայ մշակույթում հանդես է գալիս որպես դրականի դրսևորում (խիզախության, արիության, հայ հողի արյամբ սնված և մեծացած զավակի), ուղղակի բացակայում է այլ մշակույթներում, այսինքն՝ նրա պատկերը ոչ հայ մշակութակրողի գիտակցության մեջ բացակայում է: Որպես պատկերացման օրինակ, որը մի մշակույթում դրական է, մյուսում ոչ՝ կցանկանալինք ներկայացնել դեմոգրաֆիկ աճի պատկերացումը հայ և չինացի լեզվակիրների մոտ: Ինչպես հայտնի է, Հայաստանում կա դեմոգրաֆիկ խնդիր՝ բնակչության նվազում, որը մեր պետության համար բացասական երևույթ է, մինչդեռ Չինաստանում անընդհատ գրանցվում է դեմոգրաֆիկ աճ, որը բացասաբար է ընկալվում այդ պետության կողմից մեծաքանակ բնակչություն ունենալու պատճառով: Իհարկե, այս պատկերացումները հիմնված են գիտելիքի վրա, սակայն դրանց դրական կամ բացասական հարանշանակային իմաստները միանշանակ պատկերացումներ են: Այսպիսով, ակնհայտ է, որ միևնույն պատկերացումը՝ իրողության գիտակցական պատկերը, կարող է տարբեր գնահատողական արժեք ունենալ՝ կախված այն մշակութակրի աշխարհի պատկերից, որի գիտակցության մեջ դա արտացոլված է: Ասվածից հետևում է, որ տեքստը, որի հիմքում ընկած են մշակութածին այսպիսի պատկերացումներ, նույնպես կրում է ազգային-մշակութային-ճանաչողական դրոշմ:

Այսպիսով, վերը ասվածը կարելի է ամփոփ ներկայացնել հետևյալ կերպ. **գիտելիքները ձևավորվում են տեղեկատվական միավորներից, մինչդեռ պատկերացումները ներկայացված են պատկերներով լայն իմաստով; գիտելիքները հավաքական են, պատկերացումները և՛ հավաքական են, և՛ անհատական; գիտելիքները օբյեկտիվ են, պատկերացումները՝ սուբյեկտիվ, մշակութաին; գիտելիքները արքիոմատիկ են, չեն պահանջում ապացույց, պատկերացումները տեսական են և կարող են պահանջել բացատրություն և ապացույցներ; գիտելիքները գիտակցության մեջ պահպանվում են որպես տեղեկատվական միավորներ, պատկերացումները՝ պատկերներ; գիտելիքները պահանջում են հիշողության աշխատանք, ռացիոնալ են, իսկ պատկերացում-**

ները անպայման ներառում են հարանշանակություններ, գնահատականներ, դրանք ինտուիտիվ են:

Կատարված ուսումնասիրությունը հանգեցնում է ևս մեկ պարզաբանման անհրաժեշտության. ի՞նչ կապ կա գիտելիքների ու պատկերացումների և խոսող անհատի կանխենթադրությանի հենքի միջև: Ինչպես արդեն վերը նշվել է, **խոսող անհատի կանխենթադրությանի հենքը ամբողջությամբ գիտելիքների համալիր է՝** սուբյեկտիվ կամ օբյեկտիվ, այսինքն՝ ներկայացված է գիտելիքների կամ պատկերացումների միջոցով: Կախված նրանից, թե տվյալ խոսող անհատի համար տվյալ գիտակցական միավորը ինչ բնույթ ունի՝ գիտելիք է, թե պատկերացում՝ այն այդ նույն կանխենթադրությանի հենքի մեջ կձևավորի տարբեր կառույցներ՝ ֆրեյմներ, կարծրատիպեր, սցենարներ և այլն: Խոսող անհատը հաղորդակցվելիս, այսինքն՝ հաղորդման տեքստը կառուցելիս օգտագործում է մակերեսային տարբեր կառույցներ՝ ելնելով այն փաստից, թե դրա հիմքում ինչ գիտակցական կառույցներ են ընկած՝ գիտելիքներ, թե՞ պատկերացումներ: Բերենք պարզագույն մի օրինակ. եթե հասցեագրողի համար գիտակցական տվյալ միավորը տեղեկատվություն է, գիտելիք է, նա հիմնականում կօգտագործի *Գիտեմ, որ...*, *Տեղեկացված եմ, որ...*, *Ինձ ասել են, որ...*, *Ըստ Ֆ. դը Սոսյուրի՝...*, *Ինչպես հայտնում է ՌՈՅԹԵՐՍ գործակալությունը...* և նմանատիպ տեղեկատվական ասույթներ, մինչդեռ, եթե հասցեագրողի համար գիտակցական տվյալ միավորը պատկերացում է, նա հիմնականում կօգտագործի *Կարծում եմ, որ...*, *Անկասկած...*, *Համոզված եմ, որ...*, *Իմ կարծիքով...* և նմանատիպ կառույցներ: Ի դեպ, ասույթները կարող են նշյալ մակերեսային ձևերը ունենալ, բայց մեկը ներկայացնի գիտելիք, մյուսը պատկերացում, ինչպես օրինակ՝ *Լոնդոնը Անգլիայի մայրաքաղաքն է* և *Լոնդոնը չքնաղ քաղաք է*: Այսինքն՝ կարևորը ոչ թե լեզվական կաղապարն է, այլ դրա հիմքում ընկած մտածական միավորը՝ գիտելիքը կամ պատկերացումը՝ կանխենթադրությոթը:

Եզրակացություն

Այսպիսով, խոսող անհատի կանխենթադրությանի հենքի կառուցվածքային միավորները գիտելիքներն ու պատկերացումներն են: Ելնելով յուրաքանչյուր խոսող անհատի կանխենթադրությանի հենքի բովանդակությունից՝ տվյալ մտածական կառույցի հիմքում գիտելիք է, թե պատկերացում, հասցեագրողը տարբեր կերպ է կառուցում իր հաղորդման տեքստը և տարբեր կերպ ընկալում հասցեատիրոջ հաղորդման տեքստը: Վերջինս ապահովում է ընկալման գործընթացը նույն կանխենթադրությանի հենքի բաղադրիչ տար-

րերի՝ գիտելիքների և պատկերացումների միջոցով: Ի մի բերելով ուսումնասիրության արդյունքները՝ կարող ենք հաստատել, որ հաղորդակցման հիմքը՝ հաղորդակցման տեսանկյունից կառուցումը և դրա ընկալումը, հնարավոր է խոսող անհատի կանխենթադրութային հենքի միջոցով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Flick, U. (1995) *Social Representations*. // *Rethinking Psychology*. London: Sage Publishing.
2. Jodelet, D. (1984) *Representation sociale: phenomenes, concept et theorie*. // *Psychologie sociale*. Paris, France: Presses Universitaires de France.
3. Johnstone, B. (1996) *The Linguistic Individual: Self-Expression in Language and Linguistics*. Oxford: OUP.
4. Moscovici, S. (1976) *La Psychoanalyse, son image et son public*. Paris, France: Presses Universitaires de France.
5. Дюркгейм, Э. (1995) *Социология: ее предмет, метод, предназначение*. М.: Канон.
6. Караулов, Ю.Н. (1982) *VI Международный конгресс МАПРЯЛ. Современное состояние и основы проблемы изучения и преподавания русского языка и литературы. Доклады советской делегации*. М.: Русский язык.
7. Ришар, Ж.Ф. (1998) *Ментальная активность. Понимание, рассуждение, нахождение решений*. М.: Институт психологии РАН.
8. Уфимцева, Н.В. (1993) *Человек и его сознание: проблема формирования*. // *Язык и сознание: парадоксальная рациональность*. М.: Институт языкознания РАН.
9. Уфимцева, Н.В. (1995) *Русские глазами русских*. // *Язык - система. Язык - текст. Язык - способность*. М.: Институт русского языка.
10. Уфимцева, Н.В. (1995) *Этнические и культурные стереотипы: кросскультурное исследование*. // *Изв. АН. Сер. лит. и яз*, Т. 54, № 3.
11. Шахнарович, А.М.; Юрьева, Н.М. (1990) *Психолингвистический анализ семантики и грамматики*. М.: Наука.
12. (1996) *Краткий словарь когнитивных терминов (КСКТ)*. / Под общ. ред. Е.С. Кубряковой. М.: Филологический факультет МГУ им. М.В. Ломоносова.

Knowledge and Concepts as Structural Components of the Presupposition Base

Knowledge and concepts are the structural elements of the presupposition base of a speaking individual. The formation of the presupposition base, that is to say the structure and nature of knowledge and concepts depend on a number of cognitive factors: social, cultural, national, etc. Communication actually is the (linguistic) realization of the speaking individual's presupposition base and its structure.

Знания и представления, как структурные составляющие пресуппозиционной базы

Знания и представления являются структурными составляющими пресуппозиционной базы говорящей личности. Формирование пресуппозиционной базы, то есть структура знаний и представлений зависит от различных когнитивных факторов: социальных, культурных, национальных и т.д. По сути коммуникация есть (лингвистическая) реализация пресуп-позиционной базы говорящей личности и ее структуры.